

Անահիտ Խ. Աստոյան

ՀԱՅԵՐՆ ՕՍՄԱՆՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Տնտեսական գործունը՝ Մեծ եղեռնի դրդապատճառ*

Օսմանյան կայսրությունում ողջ պաշտոնեությունը, զինված ուժերը, ոստիկանությունը և դատական մարմինները կազմված էին մահմեդականներից, մեծ մասամբ՝ օսմանցի թուրքերից: Իրենց վերապահելով իշխողի դերը՝ նրանք երկրի ամբողջ տնտեսական դաշտը թողել էին ոչ թուրք տարրերին¹: Օսմանցի թուրքերը քաղաքակրթական այն մակարդակի վրա չէին գտնվում, որպեսզի կարողանային վարել և զարգացնել երկրի տնտեսությունը, ուստի ստիպված էին օգտվել իրենց գրաված երկրների բնիկ, քաղաքակիրթ ժողովուրդների փորձառությունից²:

Հայերը որպես Առաջավոր Ասիայի քաղաքակրթության հնագույն կրողներ, Օսմանյան կայսրության մյուս հպատակ ազգերի հետ ավելի քան հինգ դար տքնեցին կայսրության տնտեսությունը բարգավաճ պահելու համար: Եվ օսմանյան պետության մեջ առևտուրն ու արհեստները դաժան այն թույլատրված ասպարեզներից մեկը, ուր հայերը կարող էին փոքրիշատե ազատ կերպով դրսևորել ու զարգացնել սեփական ունակությունները:

Սուլթաններն իրենց գրաված քաղաքները անմիջապես հայերով էին բնակեցնում. օրինակ՝ Մուհամեդ Ֆաթիհն իր ոտքը Կոստանդնուպոլիս դնելուց հետո, ավերված քաղաքը վերաշինելու և գեղեցկացնելու նպատակով հրամայեց հայ արհեստավորներ և առևտրականներ տեղափոխել մայրաքաղաք: Հայ շինարար բազկի և ճարտար արհեստավորների կարիքը զգացին նաև նրա հաջորդները, ուստի պարբերաբար հայեր տեղափոխեցին Կոստանդնուպոլիս³:

Այսպիսով, Կոստանդնուպոլիսում 15-րդ դարից սկսեցին բազմանալ հայ առևտրականների խանութները, առանձին շուկաները, խաներն ու վաճառատները: Միջերկրական և Սև ծովերից դեպի Իրան և Հնդկաստան տարանցիկ առևտուրը նույնպես հիմնականում իրականացվում էր հայ վաճառականների կողմից⁴:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.03.2010:

1 Տե՛ս Լեւոն Չորմիսեան, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հտ. ա., Պէրոս, 1972, էջ 55:

2 Տե՛ս Յովհանէս Տէր Պետրոսեան, Հայերու սատարը թուրք մշակոյթին և տնտեսութեան, Գահիրէ, 1976, էջ 162:

3 Տե՛ս Ալբերտ Խառապոյան, Կոստանդնուպոլիսի հայ գաղութը (XV-XVIդդ.), Եր., 2007, էջ 51-67:

4 Տե՛ս Յ. Գ. Մ. (Յարություն Մըրմրեան), Թուրքահայոց հին վաճառականութիւն եւ վաճառականը, Կ.Պոլիս, 1908:

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոզմունք

Կոստանդնուպոլսից հետո կայսրության կարևորագույն տնտեսական կենտրոնը Ջնյունիան էր, որտեղից հայկական քարավաններ էին ուղևորվում Պարսկաստան և ասիական մայր ցամաքի այլ երկրներ: Հայ առևտրականներից գանձվող մաքսահարկերը կազմում էին սուլթանական գանձարանի եկամտի կարևորագույն աղբյուրները⁵: Դրա հետևանքով, 16-18-րդ դարերում հայերը կայսրության թե՛ ներքին և թե՛ արտաքին առևտրում գերիշխող դիրքեր էին գրավում՝ էապես նպաստելով Ասիայի և Եվրոպայի ապրանքափոխանակությանը⁶:

16-րդ դարից Կոստանդնուպոլսում կենտրոնացած էր հայ չելեպիների և ամիրաների դասը: Այս պատվանուններն էին կրում գավառից մայրաքաղաք տեղափոխված ձեռներեց անհատները, ովքեր տեր էին դարձել մեծ հարստության և ձեռք բերել կշիռ ու հեղինակություն: Նրանք աստիճանաբար մոտեցան սուլթանական գահին, արհեստապետի համեստ պաշտոնով տեղ գրավեցին արքունիքում, իսկ 18-րդ դարի կեսերից սկսեցին վարել կայսրության կարևոր գերատեսչությունները⁷:

Տյուգյանները նկարչության և ոսկերչության մեջ բացառիկ դիրք գրավելով, սերնդեսերունդ դարձան արքունի ոսկերչապետերը, որոնց վստահվեց դրամահատության գործարանը և փողերանոցը, ուր կենտրոնացած էին տերությանը պատկանող ոսկու և արծաթի պահեստները⁸:

Տեմիրճիպաշյան ընտանիքի անդամները վարում էին արքունի նավաշինական ձեռնարկության և թնդանոթարանի վերատեսչի պաշտոնները⁹:

Տատյան գերդաստանի սերունդները հիմնել և ղեկավարում են կայսրության ռազմական արդյունաբերությունը¹⁰: Տատյանները ղեկավարել են նաև երկրի թղթի արդյունաբերությունն ու բանակի հանդերձավորման գործը¹¹:

Արփիարյան ամիրայական տունը երկար շրջան վարում էր Կապան Մատենի արծաթի հանքերի վերատեսչությունը¹²:

Մկրտիչ ամիրա Ճեզայիրյանը ղեկավարում էր երկրի մետաքսագործությունն ու մաքսահավաքման գործը¹³:

Առավել բազմաթիվ էին հայ վաճառական ամիրաները, ովքեր հայտնի էին սարաֆ, սեղանավոր, բանկիր անուններով: Վարկեր տրամադրելով զինվորական և պետական գործիչներին, առևտրական ընկերություններին և պետական գրասենյակներին՝ նրանք կատարում էին հետագայի դրամատների դերը¹⁴: Մինչև 1853 թվականը՝ դրամատների ստեղծումը, հայ սեղանավորներն էին վարում կայսրության ֆինանսական քաղաքականությունը, ովքեր քանիցս երկիրը փրկել են տնտեսական տագնապներից¹⁵:

19-րդ դարում արքունի մանուֆակտուրաները հիմնականում գտնվում էին

5 Տե՛ս Դայ ժողովրդի պատմություն, հտ. դ., եր., 1972, էջ 289 և 310:

6 Տե՛ս նույնը, էջ 290-291:

7 Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հտ. դ., եր., 1984, էջ 96-98:

8 Տե՛ս Դայկ Ղազարյան, Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870թթ., եր., 1967, էջ 397, 399-340:

9 Տե՛ս Ազգագրութիւն Տեմիրճիպաշեանց, «Հանդես ամսօրեայ», 1900, Ա., էջ 51-54:

10 Տե՛ս Պուրմանեան Սերովյէ քահանայ, Տատեան ամիրաներու կեանքէն կարելոր դրուագներ. Տատեան Առաքել եւ արքունի վառօղակետութիւնը, «Նոր լուր», 1934, թիվ 4703:

11 Տե՛ս Թորոս Ազատեան, Տատեան գերդաստանը եւ իր ականաւոր ղեմքերը, Ստանպուլ, 1952:

12 Տե՛ս Դայկ Վահէ, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ-Եօրթ, 1959, էջ 659-660:

13 Տե՛ս Վահան Զարդարեան, Յիշատակարան (1512-1933), Գահիրէ, 1933, էջ 54-58:

14 Տե՛ս Լեո, Երկերի ..., հտ. դ., էջ 101:

15 Տե՛ս Լեւոն Զորմիսեան, Համապատկեր ..., հտ. ա., էջ 163:

հայ ամիրաների տնօրինության տակ: Իսկ դրամահատության գործարանի վերատեսուչներ Տյուգյանները ավելի կատարյալ դրամի թողարկման համար Եվրոպայից բերել էին շոգու ուժով աշխատող մեքենաներ, որոնք գործի դնելու համար Լոնդոն սովորելու էին ուղարկել մի քանի երիտասարդների¹⁶:

Տատյանները մանուֆակտուրայի գործարաններ են հիմնել Նիկոմեդիայում, կարևոր ներդրումներ են կատարել երկրի երկաթագործական արդյունաբերության բնագավառում: Վառողի, կաշվի և թղթի գործարանները նոր սարքավորումներով հագեցնելու նպատակով Հովհաննես Տատյանը երկու անգամ մեկնել է Եվրոպա: Նա մասնակցել է նաև Էյուպի տեքստիլ գործարանի, Հերքերեի մետաքսի ֆաբրիկայի, Նիկոմեդիայի ձուլարանի կառուցման և վերասարքավորման աշխատանքներին:¹⁷

19-րդ դարի կեսերից՝ Ղրիմի պատերազմից հետո, երբ Օսմանյան կայսրությունն իր դռները բացեց Եվրոպայի առջև, հայերը պատրաստ էին կարևոր դեր կատարելու կայսրության և Եվրոպայի միջև¹⁸: Հայ վաճառականները տիրապետում էին եվրոպական լեզուների և եվրոպական առևտրի մեթոդներին, այդ իսկ պատճառով կարողացան դառնալ թուրք-եվրոպական առևտրի միջնորդներ¹⁹: Թուրք-եվրոպական առևտրի մեջ գլխավոր բաժինը պատկանում էր հայ վաճառականներին: Նրանք ներմուծում էին եվրոպական ապրանքներ, որոնք տարածում էին Պարսկաստանից մինչև Աֆղանստան, հասնում Հնդկաստան, Ֆիլիպինյան կղզիներ, սահմանամերձ ու հեռավոր ռուսական քաղաքները, Ամերիկա, որտեղից և ներմուծում էին բամբակ²⁰: Կ.Պոլսի և Չմյուռնիայի հայկական առևտրական տները դարձել էին անմրցելի հաստատություններ: Բազմաթիվ հայ առևտրականներ իրենք կապեր ստեղծեցին Եվրոպայի արդյունաբերական կենտրոնների և առևտրական ընկերությունների հետ, հաստատվեցին եվրոպական քաղաքներում՝ Մանչեստրում, Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում, Ամստերդամում և սկսեցին դիրքեր գրավել միջազգային առևտրում²¹:

19-րդ դարի կեսերից հայ առևտրականների նոր հոսանք սկսվեց գավառային քաղաքներից դեպի Կոստանդնուպոլիս, Չմյուռնիա և ծովամերձ այլ քաղաքներ, ինչը էլ ավելի զորացրեց հայերի դիրքը կայսրության տնտեսական կյանքում,²² բայց էլ ավելի թուլացրեց հայկական տարրը Արևմտյան Հայաստանում: Եվրոպական դրամագլխի և գործարանային արտադրությունների մուտքով, կարճ ժամանակահատվածում, հայերի տնտեսական վիճակի մեջ արագ բարելավում տեղի ունեցավ: 1908 թվականին Թագվոր Մուքիասյանի տնօրինությամբ հիմնվեց Օսմանյան բանկի մասնաճյուղը, որը մեծապես դյուրացրեց հայ առևտրականների դրամական գործառնությունների իրականացումը: Կոստանդնուպոլսում և երկրի այլ քաղաքներում կերպասեղենի, հագուստեղենի, կոշիկի և այլ մանր առևտրի մեջ ամեն կողմ կարելի էր հանդիպել հայերի բազմաթիվ խանութների: Հայերը տեղ էին դարձել ճաշա-

16 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս եւ իր դերը, հտ. դ., Անթիլիաս, 1988, էջ 204-205:
17 Տե՛ս Վահան Զարդարեան, Յիշատակարան (1512-1935), հտ. գ., Գահիրե, 1935թ, էջ 187-192:
18 Տե՛ս Լեւոն Չորմիսեան, Համապատկեր ..., հտ. ա., էջ 183:
19 Տե՛ս Հայկ Ղազարյան, Արևմտահայերի ..., էջ 403:
20 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. ե., Եր., 1974, էջ 101:
21 Տե՛ս Լեւոն Չորմիսեան, Համապատկեր արևմտահայոց մէկ դարու պատմութեան, հտ. գ., (1908-1922), Պէյրուս, 1975, էջ 98:
22 Տե՛ս Լեւոն Չորմիսեան, Համապատկեր ..., հտ. ա., էջ 187:

րանների, սրճարանների, հյուրանոցների: Կոստանդնուպոլսի բարձրակարգ, ամենաարդիական հյուրանոց-ռեստորանը պատկանում էր Սկրտիչ Թոքատ-լյանին²³:

Արհեստների ծաղկումը Օսմանյան կայսրությունում նույնպես հայ ստեղծագործ մտքի տքնության արդյունք էր: Հայ արհեստավորները բազմաթիվ բնագավառներում չունեին իրենց մրցակիցները²⁴:

Հայ **ճարտարապետների, շինարար վարպետների, քարակոփների և որմնադիրների** կողմից է կառուցվել Կ. Պոլսի և այլ քաղաքների հանրային շենքերի, պալատների, մզկիթների նշանակալի մասը: Հայերի կողմից է կառուցվել նաև Հայդար Փաշա-Բադդադ երկաթուղու կարևոր մասը: **Պետական շինարարությունը**՝ արքունի ճարտարապետությունը, սերնդեսերունդ գտնվում էր Պալյան գերդաստանի պատասխանատվության տակ: Այս բացառիկ բնույթի 9 անդամները, շուրջ 2 դար իրար հաջորդելով, վարեցին արքունի ճարտարապետի պաշտոնը և Կ. Պոլիսը զարդարելով հրաշակերտներով՝ իրենց բարձր արվեստի կնիքը թողեցին մայրաքաղաքի վրա²⁵: Պալյաններից առաջ էլ՝ Սինան Մեծից²⁶ սկսած, արքունի հայ ճարտարապետների մի ամբողջ շարան է եղել Կոստանդնուպոլսում, որ իրենց բաժինն են բերել երկրի շենացման գործում²⁷:

Գորգագործությունը ևս մուտք է գործել և զարգացել հայերի միջոցով, մինչդեռ այդ նույն գորգագործությունն այսօր թուրքերի անունով է հիշատակվում Եվրոպայում: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ այն բոլոր գորգերը, որոնք հայտնի են փոքրասիական գորգեր անունով, պարզապես, հայկական ձեռակերտներ են: Սեբաստիայում, Կեսարիայում և այլուր հայերի գործած գորգերը մեծ համբավ ունեին համաշխարհային շուկայում, ուստի 19-րդ դարից սկսած հայերը զարկ տվեցին գորգի արտադրությանը²⁸:

Երկրում մեծ հռչակ ունեին հայ **զինագործ** վարպետները: Կարնեցի զինագործները դարեր շարունակ զենք են մատակարարել օսմանյան բանակին: Մեծ համբավ ունեին հատկապես կարնեցի զինագործների Վեմյան գերդաստանը²⁹: Սուլթանների համար հայ զինագործների պատրաստած զենքերից շատերն այսօր պահվում են աշխարհի տարբեր թանգարաններում:

Կային արհեստներ, որոնք կարծես թե բացառապես հայերին էին վերապահված: Գրանցից մեկն **ատաղձագործությունն** էր և մանավանդ՝ **կահույքագործությունը**: 19-րդ դարի 60-ական թվականներին նշանավոր էր կահույքագործների Քեմհաճյան գերդաստանը: Գալուստ Քեմհաճյանն առաջինն էր կայսրությունում, ով Կոստանդնուպոլսում հիմնեց կահույքի գործարան: Հետագայում այդ գործին զարկ տվեցին ուրիշ հայ վարպետներ՝ հիմնելով փայտամշակման և կահույքի տարբեր գործարաններ և արտադրություններ³⁰:

23 Տե՛ս նույնը, էջ 182:

24 Տե՛ս Դայ գաղթաշխարհի պատմություն, միջնադարից մինչև 1920թ., Եր., 2008, էջ 129:

25 Տե՛ս Pars Tuglaci, "The Role Of The Balian Femili In Ottoman Architecture", Ստամբուլ, 1990:

26 Տե՛ս Սինան ճարտարապետին հայութիւնն ապացուցուած, «Անահիտ», Փարիզ, 1931, Գ.-Դ., էջ 165-166:

Տե՛ս նաև "Türk Tarihi Encümeni Mecmuası" պարբերականի հունիս 1930-մայիս 1931 թթ. 5-րդ համարները:

27 Տե՛ս Ս. Ենվահիրճեան, Դայ ճարտարապետներ Օսմանեան կայսրութեան մեջ, «Շիրակ », 1968, Զ.-Է., էջ 251-273:

28 Տե՛ս Դայ ժողովրդի պատմություն, հտ. գ., Եր., 1975 էջ 464:

29 Տե՛ս Դայ ժողովրդի ... , հտ. Ե., էջ 96-97:

30 Տե՛ս Դայ գաղթաշխարհի ..., էջ 127:

Խեցեգործությունը կայսություն մուտք է գործել դեռևս 15-րդ դարում՝ Քյուքսահիայում հաստատված հայերի կողմից: Պարսկաստանից գաղթած հայ արհեստավորները զարգացման նոր որակ են հաղորդել հախճապակու արտադրությանը: Իսկ 18-րդ դարի թուրք պատմագիր Էվլիա Չելեպին իր «Ուղեգրության» մեջ նշում էր, որ Քյուքսահիայի երեք հայկական քաղերի բնակչությունը զբաղված էր **հախճապակու** արտադրությամբ³¹: 1914թ. Քյուքսահիայում գործող երեք հախճապակու արտադրությունները աշխատում էին Լոնդոնի և Փարիզի շուկաների համար: Քյուքսահիայում արտադրված բազմաթիվ հախճապակյա իրեր այսօր պահվում են Լոնդոնի, Վենետիկի, Փարիզի և աշխարհի այլ խոշորագույն թանգարաններում³²:

Հին ժամանակներից հայերի նախընտրած արհեստներից էր **ոսկերչությունը**: Ոսկերչության կարևոր կենտրոններից էին Կ.Պոլիսը, Վանը և Կարինը, որոնք անվանի էին դարձել իրենց ոսկերիչներով³³: Նույն Էվլիա Չելեպին Կարինի հայ ոսկերիչների մասին գրում էր, որ նրանք աշխարհի ամենաճարտար վարպետներն են: 18 և 19-րդ դարերում Կոստանդնուպոլսի ոսկերիչների դասը, գրեթե ամբողջովին, բաղկացած էր հայերից: 1806 թվականի սուլթանական մի հրովարտական հիշատակվող տասնյոթ լավագույն ոսկերիչներից միայն մեկն էր հույն³⁴:

Հայ **արծաթագործների, ոսկերիչների և ակնագործների** արտադրանքը իրենց որակով գերազանցում էր եվրոպականին, ուստի Օսմանյան կայսրությունում օտար բարձրաստիճան հյուրերի համար նախատեսված նվերների պատվերները հիմնականում կատարել են հայ ոսկերիչներն ու արքունի ոսկերչապետերը: Հայ ոսկերիչները միաժամանակ թանկարժեք քարեր և մանավանդ՝ ադամանդ մշակող լավագույն արհեստավորներն էին և իրենց վարպետությամբ չէին զիջում Հոլանդիայի, Բելգիայի, Ֆրանսիայի իրենց արհեստակիցներին³⁵:

Ժամագործության մեջ հայերը նույնպես առաջնակարգ դիրքեր ունեին: Հայ ժամագործների մեջ նշանավոր էր մեծանուն երգահան Տիգրան Չուխաճյանի հայրը՝ Գևորգ Չուխաճյանը, ով սուլթան Մեջիդի արքունի ժամագործապետն էր: Նա հնարել է երգող ժամացույց: Իսկ հայտնի ժամագործ Սյրտիչ Գալֆայանը որպես ոսկերիչ պատրաստել է **օսմանյան գինանշանը**, քանզի եղել է սուլթան Մահմուդ Բ.-ի ոսկերիչը³⁶:

Շուրջ երեք դար բարձրորակ **ծնծղաներ** են պատրաստել **Զիլճյան** գերդաստանի անդամները: Այդ գերդաստանի նախահայր Գրիգոր Զիլճյանը 17-րդ դարում ծնծղաների պատրաստության արհեստը սովորել է Չինաստանում, իսկ այնուհետև կատարելագործել այն՝ իր հնարամտության և գյուտարարական տաղանդի շնորհիվ: 19-րդ դարում Քերովբե Զիլճյանը Անգլիայում ներկայացրել է իր ծնծղաները: Ավստրիացի հռչակավոր երգահան և խմբավար **Յոհան Շտրաուսը** պատվիրել է այդ ծնծղաներից, նշելով, որ դրանց երևան

31 Տե՛ս Karo Kurkman, Magic of clay and fire A histori of Kutahya pootery and potters, Ստանպուլ, 2006:

32 Տե՛ս Դայկական սովետական հանրագիտարան, հտ. գ., էր. 1979, էջ 25:

33 Տե՛ս Յովհաննես Տէր Պետրոսեան, Դայերու ..., էջ 206:

34 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս ..., հտ. ա., էջ 215:

35 Տե՛ս Արմենակ Սազըզեան, Դայերու գեղարուեստական գործունեութիւնը Իվոնիոյ եւ Կ.Պոլսոյ սուլթաններու օրով, «Անահիտ», 1933, հոկտեմբեր- դեկտեմբեր, էջ 34:

36 Տե՛ս Թեոֆիլ, Ամենու՛ն տարեցոյցը, 1927, էջ 288:

գալով՝ լրացրել է իր նվագախմբի հարվածային գործիքների ակնհայտ պակասը: Ձիլճյանները 1914 թվականին ունեին ծննդայագործության երկու գործարան, որոնց արտադրանքը թե՛ հնչողությամբ և թե՛ դիմացկունությամբ գերազանցում էր եվրոպականին: «Ձիլճյան» փորագրությունը կրող ծննդաներն այսօր գործածվում են աշխարհի բազմաթիվ սիմֆոնիկ, փողային և էստրադային նվագախմբերում³⁷:

Որակյալ **կոշկակարությունը** Օսմանյան կայսրություն է մուտք գործել կրկին հայերի միջոցով: Այս բնագավառում թուրքերը նույնպես ունեին արհեստավորներ, սակայն հայերը, հետամուտ լինելով նորություններին և աշխատանքի կատարելագործմանը, առաջնակարգ դիրքեր գրավեցին այս ասպարեզում և նույնիսկ գործարաններ հիմնեցին³⁸:

Գերձակությունը, որը նույնպես հայերի նախասիրած արհեստներից էր, զարգացում է ապրել Կ. Պոլսում, Երզնկայում և երկրի այլ քաղաքներում:

Եվրոպական հագուստները երկրի քաղաքներ մուտք են գարծել հայերի և հույների միջոցով: 19-րդ դարի սկզբին հայերը հանդիսանում էին անգլիական նորաձևություն տարածող վարպետները³⁹:

Հայ կնոջ ճաշակն ու ստեղծագործելու ձիրքն ի հայտ է եկել **ժանյակագործության** մեջ: Այդ ժանյակները զարդարում էին սուլթանական հարեմի և թուրք բարձրաստիճան պաշտոնյաների կանանց հագուստները: Եվրոպան նման աշխատանքները ճանաչել է իբրև հայկական ժանյակ՝ «*յանթել արմենիեն*» անվանումով:

Ասեղնագործության մեջ իրենց աշխատանքներով նշանավոր էին Այնթափի հայուհիները, որոնց ձեռակերտները կոչվում էին «Այնթափի գործ»: Այս արհեստը տարածվել էր նաև Ուրֆայում, Մարաշում և այլ շրջաններում և դարձել շահութաբեր գործ⁴⁰:

Հայազգի Աբդուլլահ եղբայրները եղել են օսմանյան **լուսանկարչության** հիմնադիրները: Նրանք արքունի լուսանկարիչներ էին: Գևորգ, Ստեփան և Վիչեն Աբդուլլահ եղբայրների վարկը շատ բարձր էր, ուստի նրանց մոտ էին լուսանկարվում Կոստանդնուպոլիս ժամանած եվրոպական երկրների մեծանուն այրերը⁴¹:

Երկրի կենտրոնական քաղաքներում, գրեթե ամբողջովին, հայեր էին նաև **բժիշկները, դեղագործները, փաստաբանները** և ազատ մասնագիտության այլ ներկայացուցիչները: Ինչպես ռուս պատմաբան Գոլոբորոդկոն է վկայում՝ քաղաքներում առանց հայերի չէր կարող գոյություն ունենալ արվեստի, արհեստագործության, գիտության, տեխնիկայի որևէ ճյուղ⁴²:

Հայերի տնտեսական և մշակութային գործունեության մասին հետևյալ կարծիքն է հայտնել Թուրքիայի Հանրապետության լուսավորության նախարար Համդուլահ Սուպիի բեյը. «Հայ ճարտարապետության կենտրոններից մեկից՝ Անիից հայկական ոճի ազդեցությունը թափանցել է մեր երկիր և դրա դրոշմը կարող ենք տեսնել մեր մզկիթների և մեր մեդրեսեների վրա: Մեր

37 Տե՛ս Արծիվի Բախչինյան, Հայազգի գործիչներ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Եր., 2002, էջ 47-48:

38 Տե՛ս Յովհաննես Տեր Պետրոսեան, Հայերու ..., էջ 188:

39 Տե՛ս Արշակ Ալաօյաճեան, Պատմութիւն Կեսարիոյ Հայոց, հտ. ք., Գահիրե, 1937, էջ 1520:

40 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս..., հտ. դ., էջ 241:

41 Տե՛ս Եսայի Տայեցի, Գեորգ Ապտուլլահ, կեանքն ու գործունեութիւնը, «Բազմավեպ», 1929, Ա.-է.:

42 Տե՛ս Հայ ժողովրդի ..., հտ. ե., էջ 96-97:

օրերում իսկ, ոչ միայն Բոսֆորի ավազանները պահպանելու վրա, այլև մեր դամբարանների, մեր շիրմակոթողների, մեր գլխի փաթեթոցների, մեր գրպանի էմալազարդ ժամացույցների վրա: Ամեն տեղ, ամեն բանի վրա կտեսնենք կնիքը նրանց գեղագիտական տաղանդի»⁴³:

Երկրագործությունը ևս, մանավանդ Արևմտյան Հայաստանի տարածքում, քիչ բացառությամբ, գտնվում էր հայերի ձեռքում: **Այգեգործությունը, պարտիզպանությունը, գինեգործությունը, մեղվապահությունը, շերամաբուծությունը** զարգանում էր հայերի շնորհիվ⁴⁴:

Գերմանացի քաղաքագետ Պաուլ Վայցը 1915 թվականին Արևմտյան Հայաստան կատարած ուղևորության մասին ռեյխսկանցլեր կոմս Ֆոն Հերթլինգին ներկայացրած գեկուցագրում հետևյալ կերպ էր բնութագրում հայ երկրագործներին. «Այստեղ գործնականում առաջին անգամ գիտակցում ենք, որ հայերի ունակությունները չեն սահմանափակվում միայն առևտրի և ֆինանսների բնագավառով: Էրզինջանի և Էրզրումի բարձրավանդակներում մինչև ներքև՝ դեպի Մուշ, Խարպուտ և Վանա լճի շրջակայքը, հայն առաջին հերթին առողջ և ուժեղ հողագործ է: Գյուղացի՝ բառիս բուն իմաստով: Մշտաբնակ հայ գյուղացիությունն առաջին հերթին նպաստել է թուրքական կայսրության Արևելյան Անատոլիայի գավառներում երկրագործության զարգացմանը: Գյուղացիներն առանց ճանապարհի ինքնաշարժվող ձգվող մրգատու այգիները, որոնք մի ժամանակ հիասքանչ ծաղկունքի մեջ են եղել, դրանց հարող բարեբեր դաշտերն ու մարգագետինները, որ խնամքով մշակված են եղել, հիմա անտերության են մատնված, սակայն վկայում են կենցաղային կուլտուրայի համեմատաբար բարձր մակարդակի մասին, որ իշխել է այստեղ, մինչև նոր, խեղդող հարաբերություններին տեղ զիջելը: Հայ գյուղացիությունը եղել է խաղաղասեր, աշխատունակ և պետության գանձարանի համար ծառայել հարկերի կարևոր աղբյուր»⁴⁵:

19-րդ դարում կայսրության մեջ **երկրագործական նոր գիտելիքների** առաջին տարածողները եղան Եվրոպայի երկրագործական համալսարաններում ուսանած հայ մասնագետներ Գրիգոր Աղաթոնը,⁴⁶ Հակոբ Ամասյանը,⁴⁷ Արամ Երամը,⁴⁸ որոնց նախաձեռնությամբ Կ.Պոլսում և երկրի այլ քաղաքներում բացվեցին երկրագործական և անասնաբուժական վարժարաններ: Նրանք իրենց հրապարակումներով, պաշտոնական և մանկավարժական գործունեությամբ ևս նպաստել են կայսրության գյուղատնտեսությունը գիտական նոր մեթոդներով զարգացնելու գործին:

Երկրագործության հետ կապված ասպարեզներից էին **շերամապահությունը** և **մետաքսագործությունը**, որոնց կարևորությունը հայերը վաղուց էին ըմբռնել: Պողոս ամիրա Պիլեզիկյանը և Հակոբ Չելեպի Տյուգյանը 19-րդ դարի սկզբներին հաստատվեցին մետաքսագործության ասպարեզում՝

43 Արշակ Չօպանեան, Հայ ազգն եւ իր մշակութային արժեքը, Փարիզ, 1946, էջ 26-27:
44 Տե՛ս Գրիգոր Արծրունի, Թիւրքաց հայերի տնտեսական դրութիւնը, Թիֆլիս, 1894:
45 Վուֆգանգ Գուստ, Հայերի ցեղասպանությունը: 1915-1916 Գերմանիայի արտաքին գործոց նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերը, Եր., 2005, էջ 444:
46 Տե՛ս Սահակ Տէր Մովսէսյան, Յիշատակ Արամ Երամ էֆենտիի, «Բազմավեպ», 1927, Ա, էջ 25-32:
47 Տե՛ս Սկրտիչ Պողոտրեան, Հայ հանրագիտակ, Բուքրէշ, 1939, էջ 120-121:
48 Տե՛ս Թորոս Ազատեան, Հայ պաշտօնատարներ Թուրքիոյ մէջ. Աղաթօն Գրիգոր, «Ժամանակ», 1944, թիվ 306:

ԻԿ(Ը) փարի, թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

Պրուսայում հիմնվելով մանարաններ⁴⁹: Կայսրությունում մետաքսագործության ծավալմանը սատարել է Սկրտիչ ամիրա Ճեզայիրյանը՝ արդիականացնելով մետաքսի արտադրությունը: Նրա ձեռնարկություններում արտադրված մետաքսը 1851թ. Լոնդոնի ցուցահանդեսում արժանացել է շքանշանի:⁵⁰ Երկրում շերամաբուծությունը և մետաքսի արտադրությունը մեծ թափ է առել Գևորգ Թորգոմյանի շնորհիվ, ով 1888 թ. հիմնել է Պրուսայի Շերամաբուծական վարժարանը, ուր 35 տարի շարունակ վարել է տնօրենի և ուսուցչապետի պաշտոնները: Այստեղ բոլոր մասնագետ դասախոսները նույնպես հայեր էին: Այս կրթական հաստատության շնորհիվ երկրում կիրառվեցին շերամաբուծության նոր գիտական մեթոդներ, և Թուրքիայում արտադրված մետաքսը մեծ պահանջարկ գտավ Եվրոպայում⁵¹: Եվրոպական սարքավորումներով հագեցած էր 1870 թվականին Խարբերդում հիմնված՝ Ֆաբրիկատորյան եղբայրներին պատկանող մետաքսի գործարանը, որն իր տեսակով միակն էր երկրի ասիական մասում: Այստեղ արտադրված որակյալ մետաքսը մրցանակակներ էր շահել միջազգային ցուցահանդեսներում և իր որակով չէր զիջում Լիոնի համբավավոր մետաքսին⁵²:

Օսմանյան կայսրությունում **տնտեսագիտությունը** գիտական հիմքերի վրա են դրել սուլթան Աբդուլ Համիդ Բ.-ի նախարարներ Միքայել փաշա Փորթուզալյանը⁵³ և Հովհաննես փաշա Սազրզյանը⁵⁴: Նրանք Մյուլբիեի բարձրագույն վարժարանում կայսրությունում առաջին անգամ հիմնել են տնտեսագիտության և քաղաքատնտեսության ամբիոններ, ուր երկար տարիներ դասավանդելով՝ պատրաստել են բազմաթիվ մասնագետներ, թարգմանել ու հեղինակել են տնտեսագիտության մասին գրքեր ու դասագրքեր, ստեղծել մասնագիտական եզրույթներ, որոնցից զուրկ էր այդ շրջանի թուրքերեն լեզուն⁵⁵:

Հայերի նախաձեռնությունը զուտ վաճառականության և արհեստագործության մեջ չսահմանափակվեց: Գտնվեցին նաև հայ առևտրականներ, ովքեր եվրոպական սարքավորումներ, մեքենաներ փոխադրեցին երկիր և տեղում սկսեցին կազմակերպել եվրոպական որակ և արտաքին տեսք ունեցող ապրանքների արտադրություն: Հայերը կարողացան կարճ ժամանակահատվածում մտնել արդյունաբերական ձեռնարկումների ոլորտ, քանզի աստիճանաբար փոխվում էր կապիտալի բնույթը. առևտրական կապիտալը փոխակերպվում էր արդյունաբերականի: 19-րդ դարի կեսից հայերը սկսեցին հիմնել **նավաշինական, ծխախոտի մշակման, բամբակի մշակման, ալյուրի, ձեթի** արտադրության ֆաբրիկաներ և գործարաններ:

20-րդ դարասկզբին Արաբկիրում, որտեղ **կտավագործությունը** հայ ազգաբնակչության հիմնական զբաղմունքն էր, արդեն գոյություն ունեին **մանուսայի՝ 15, մանրաթելի՝ 9 և սփռոցի ու սավանի** պատրաստման 18 ձեռնարկություններ: Արդյունաբերության որոշ ճյուղերում նկատվում էր անցում մանուֆակտուրա-

49 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս ..., հտ. դ., էջ 265-266:

50 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս..., հտ. գ., էջ 118-126:

51 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս ..., հտ. դ., էջ 267:

52 Տե՛ս Վահե Դայկ, Խարբերդ..., էջ 640-643:

53 Տե՛ս Դ. Յ. Թորոսեան, Միքայել Փորթուզալ փաշա, «Բազմավեպ», 1936, Ը.-ԺԱ., էջ 331-334:

54 Տե՛ս Դ. Պ. Սամուէլեան, Յովհաննես փաշա Սազրզ. Կենսագրական, «Դանդես ամսօրեայ», Վիեննա, 1912, թ., էջ 513-520:

55 Տե՛ս Գրիգոր Խ. Քեօմիրճեան, Յօղուածաշարք, Կենսագրական բաժին, Ստանպուլ, 1947, էջ 7-15:

րային արտադրությունից գործարանային արտադրության: Կարինում, Վանում, Բաղեշում **չալագործական, պղնձագործական** և այլ ձեռնարկությունների արտադրանքը սպառվում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում⁵⁶:

Հայերի տնտեսական առաջընթացն ու զարգացումը կատարվում էր երկրում տիրող կամայականությունների մթնոլորտում: Նույն եկամուտն ունեցող թուրք վաճառականից պետությունը երեք անգամ պակաս հարկ էր վերցնում, քան հայից: Կողոպուտներն ու կանխամտածված հրդեհները հաճախ ավերածության էին ենթարկում Վանի, Խարբերդի, Ադանայի և այլ կենտրոնների շուկաները: 1908թ. Խարբերդում իշխանությունները բռնագրավեցին հայերին պատկանող արդյունաբերական ձեռնարկությունները⁵⁷:

Եվ ահա՝ 1912-1913թթ. Բալկանյան պատերազմում պարտությունից հետո թուրքերն ատելությամբ լցվեցին կայսրության քրիստոնյա բնակիչների հանդեպ: Մինչ այդ իտալացիների դեմ հայտարարված առևտրական բոյկոտը տարածվեց հույների և հետո նաև հայ առևտրականների հանդեպ: Թուրքերին արգելում էին առևտուր անել քրիստոնյաների հետ՝ նրանց համարելով թշնամի⁵⁸: Ու թեև 19-րդ դարի վերջին 20-րդի սկզբին հայերին պատկանող հողերի և ունեցվածքի բռանագրավումը դարձել էր սովորական երևույթ, բայց հայերը շարունակում էին առաջնակարգ տեղ գրավել կայսրության տնտեսության մեջ:

Մեծ եղեռնի նախօրեին Օսմանյան կայսրությունում հայ տարրի տնտեսական վիճակի մասին պատկերացում է տալիս Գրիգոր Չոհրապի «Սեբաստիայի նահանգի առևտրական և արդյունաբերական վիճակագրությունը», որը 1913 թվականին տպագրվել է ՀՅԳ-ի կողմից Փարիզում հրատարակվող "Paur les peuples d'Orient" («Արևելքի ժողովուրդների համար») երկշաբաթյա հանդեսում: Սեբաստիայի նահանգը թեև վեց վիլայեթների մեջ համարվում էր այսպես ասած՝ ամենաքիչ հայկականը (բնակչության տոկոսային հարաբերակցությամբ), մինչդեռ այն իր առևտրական և արդյունաբերական ակտիվությամբ գրեթե ամբողջովին պարտական էր հայերին: Այս նահանգի ներմուծող առևտրում 166 առևտրականներից 141-ը հայեր էին, 13-ը՝ թուրք, 12-ը՝ հույն: Արտահանման բնագավառում 150 առևտրականներից 127-ը հայեր էին, 23-ը՝ թուրք: 37 դրամատներից հայերին էին պատկանում 32-ը, թուրքերին՝ միայն 5-ը: 9800 խանութպաններից ու արհեստավորներից հայեր էին 6800-ը, թուրք և հույն՝ միայն 3000-ը: Համանման պատկեր էր ներկայացնում տեղական արդյունաբերությունը: 150 ֆաբրիկաներից և ձեռնարկություններից 130-ը պատկանում էին հայերին, 20-ը թուրքերին և 5-ը (գորգի ֆաբրիկաներ)՝ օտար և խառը ընկերություններին: Ֆաբրիկաների ու ձեռնարկությունների տեխնիկական անձնակազմը բացառապես կազմված էր հայերից: Բանվորների թիվը հասնում էր 17.700-ի, որոնցից մոտ 14.000-ը հայեր էին, 3.500-ը՝ թուրք և 200-ը՝ հույն և այլք⁵⁹:

Նույն պատկերն էր Վանի վիլայեթում, որտեղ հայերի ձեռքին էր առևտրի 80 տոկոսը: **Ոսկերիչները, փորագրիչները, կահույքագործները, դերձակները,**

56 Տե՛ս Հայ ժողովրդի..., հտ. գ., էջ 464:

57 Տե՛ս Լույնը , 466-467:

58 Տե՛ս Լևոն Չորմիսյան, Համապատկեր ..., հտ. գ., էջ 78:

59 Տե՛ս Գրիգոր Չոհրապ, Սեբաստիայի նահանգը տնտեսական եւ ազգագրական տեսակետից եւ հայերի դրուժինը, երկերի ժողովածու, հտ. գ., էջ 494-512:

ջուլիակները, երկաթագործները, աստաղձագործները, որմնադիրները և այլ մասնագիտությունների ներկայացուցիչներ գերազանցապես հայեր էին: Ազատ մասնագիտություններին հետևողների՝ **բժիշկների, իրավաբանների, ճարտարապետների, դեղագործների** և այլոց շարքերում առաջնակարգ դիրք ունեին հայ մասնագետները, իսկ թուրքերի թիվը սահմանափակ էր⁶⁰:

Օսմանյան կայսրությունում հայերի տնտեսական գործունեության մասին հայկական աղբյուրների այս տեղեկությունները հաստատում են նաև օտար աղբյուրները: Խորհրդային հայտնի թուրքագետ Գ. Երեմենը, հիմնվելով ռուսական աղբյուրների վրա, բերում է հետևյալ տեղեկությունները. «Սկսած 19-րդ դարի 30-ական թվականներից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակը անշեղորեն աճում էր ոչ միայն կոմպրադորական, այլև ընդհանրապես առևտրական, ինչպես նաև արդյունաբերական բուրժուազիան, որը թուրքական չէր ազգային պատկանելությամբ: Այդ բուրժուազիայի աճի մասին վկայում են ժամանակի բազմաթիվ ականատեսներ՝ ճանապարհորդներ և հետազոտողներ: Ահա, օրինակ, Մ. Պ. Վրոնչենկոյի (1835 թվական) տպավորությունները. արհեստներն ու առևտուրը Արևմտյան և Կենտրոնական Անատոլիայի հայերի ամենագլխավոր զբաղմունքն է: Փոքր Ասիայի ներքին քաղաքներում ամենահարուստ վաճառականները հայեր են: Բոլոր բանկատերերը քրիստոնյաներ են: Քրիստոնյա վաճառականները թուրք վաճառականներից ունևոր էին և իրենց ձեռքում էին պահում առևտրական ամենագլխավոր շրջանառությունները: Մոտավորապես նույնպիսի տպավորություն է ստացած եղել նաև Վ. Ջ. Պալգրևը (1869-1872 թվականներ).- «Գարա-Հիսարի շրջանում հայերը զբաղվում էին առևտրով և վաշխառությամբ, և շուտով կգա մի ժամանակ, երբ նրանց կանցնեն նախկին մահմեդական սեփականատերերի բոլոր հողերը: Գ. Վ. Պուտյատան (1896 թվական) գրում էր, որ գրեթե բոլոր սարաֆները (այսինքն՝ դրամավոխները, բանկիրները, վաշխառուները) Թուրքիայում հայեր են: Քաղաքներում հայերի ձեռքում է կենտրոնացած առևտուրը, արհեստները, վաշխառությունը: Սեկ այլ ճանապարհորդ՝ Յու. Կազի-Բեկը (1897 թվական), ըստ էության կրկնում է նրան, հայտնելով, որ ամբողջ առևտուրը, ինչպես Տվրոպական, այնպես էլ Ասիական Թուրքիայում, դարձել է հայերի մենաշնորհը»⁶¹:

Այս տվյալներն է հաստատում նաև Յոհաննես Լեփսիուսի պատրաստած տեղեկագիրը. «Ներմուծման գլխավոր մասը գտնվում է հայերի ձեռքին: Հայկական ամենամեծ տներն իրենց մատակարարող հաստատություններն ունեն եվրոպական տարբեր զարգացած քաղաքներում: Չհաշված մի քանի դյունմեններին (այլազգի թրքացածներ) ու իսպանական ծագում ունեցող հրեաներին, ամբողջ Փոքր Ասիայում, թերևս մի քանի բացառությունից բացի, չկա գուտ թուրքական առևտրական, որ առևտրական հարաբերության մեջ եղած լինի արտասահմանի հետ: Հակառակ նրան, որ թուրքական կառավարությունը մինչև օրս ոչ մի վիճակագրություն չի հրատարակել, բայց մեծ նավահանգիստներից ներմուծած ապրանքների արժեքը (առանց Սիրիայի) կարելի է գնահատել 15 միլիոն օսմանյան ոսկի: Այդ մեծ նավահանգիստներն աշխատում են ուղղակի Տվրոպայի հետ, դրանք են՝ Կոստանդնուպոլիսը,

60 Տե՛ս Ջոն Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Եր. 1967, էջ 89:

61 Դմիտրի Երեմեն, Թուրքերի ծագումը, Եր., 1975, էջ 241-242:

Իգմիրը, Տրապիզոնը, Սամսունը և Մերսինը: Այդ ներմուծման ամենամեծ բաժինը գտնվում է հայ խոշոր առևտրականների ձեռքում»⁶²:

Այսպիսով, տնտեսության բնագավառը թուրքերը թողել էին հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, առաջին հերթին՝ հայերին, որոնց պարտքն ու պարտականությունն էր մշակել հողը, զբաղվել արհեստներով, առևտրով և ժամանակին ու պահանջված չափերով մուծել պետական և մյուս կարգի հարկերը⁶³:

Արդյունքում՝ ձևավորվել էր թուրքերի կողմից հպատակեցված ժողովուրդների կոլեկտիվ շահագործման որոշակի համակարգ, քանզի. «Եթէ Հայեր, Յոյներ, Պուլկարներ, Արաբներ...չգտնուէին, ո՞վ պիտի կերակրէր իրենց բանակը, պետութեան պաշտօնեա *նեղը*, փաշա *նեղը*, վեզիր *նեղը*: Իրենք կռուելու վարժութիւն միայն ունէին եւ չէին ուզեր եւ չէին կարող հող մշակել, առետուր ընել, արուեստ մը գործադրել: Չբաղած ըլլալով միշտ պատերազմելով, բազմութիւններուն վրայ հսկողութիւն կատարելով, ժամանակ եւ միջոց չունէին առօրեայ ընթացիկ աշխատանքներով զբաղելու: Աւելի դիրքին էր եւ հաճելի, զինուորի եւ ոստիկանի պաշտօնը քան թէ հողով, արհեստով կամ առետուրով զբաղումը: Ինչու՞ յոգնէին մտքով եւ մարմնով, տաղտուկ եւ նեղութիւն յանձն առնէին, երբ իրենց պաշտօնով կրնային ապրել աղայի պէս, իրենց հրամանին ենթարկուող մարդոց աշխատանքին արդիւնքը իւրացնելով: Պետութիւնը ամէն դիրութիւն կու տար իրենց այդ իւրացումը ապահովելու օրինական միջոցներով, օրէնքներով, հրահանգներով, դատական եւ վարչական կազմակերպութիւններով»⁶⁴:

Թուրքերի հիմնական զանգվածը մշտապես ձգտել է դառնալ պաշտոնյա կամ զինվորական և թողել է, որ ուրիշ ազգերը տքնեն և բարիքներ ստեղծեն իրենց համար⁶⁵: «Բոլոր չարիքների արմատն այն է,-իբ հիշողություններում խոստովանել է Աբդուլ Համիդ Բ.-ն,-որ ոչ մի օսմանցի չի աշխատում իրական արժեքներ ստեղծելու համար: Օսմանցին սովոր է պարոն լինել և աշխատանքը ուրիշներին թողնել: Նա ապրում է և զվարճանում: Մեր երիտասարդները կարծում են, թե իրենք չեն կարող այլ բան դառնալ, քան սպա և պաշտոնյա»⁶⁶:

Թուրք իշխանավորները որևէ լուրջ ջանք չեն գործադրել իրենց ազգակիցներին տգիտության քայքայիչ և անդամալուծող կապանքներից ազատելու համար: 20-րդ դարի սկզբներին թուրք բնակչության 90 տոկոսը անգրագետ էր⁶⁷: Համատարած անգրագիտության մեջ չէին կարող զարգանալ գիտությունը, արհեստները, արվեստները և տեխնիկան:

Առաջին օրից Օսմանյան կայսրությունը իրեն թշնամի էր համարում Եվրոպային և նրա ստեղծած քաղաքակրթությունը: Դուրանի դեմ դավաճանություն և ծանր հանցանք էր համարվում քրիստոնյա երկրների տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային ձեռնարկների ընդօրինակու-

62 Յոհաննես Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր: Հայ ժողովրդի ջարդերը, Եր., 2003, էջ 170:
63 Տե՛ս Հովհաննես Ինճիկյան, Օսմանյան կայսրության անկումը. սոցիալ-տնտեսական ակնարկ, Եր., 1984, էջ 5:
64 Լեւոն Չորմիսեան, Համապատկեր արեւմտահայոց մէջ դարու պատմութեան, հտ. ք., Բեյրութ, 1974, էջ 409:
65 Տե՛ս Յակոբ Սիրունի, Պոլիս ..., հտ. դ., էջ 300:
66 Գուրգէն Եազըճեան, Ապտիւլ Համիտ Բ. կարմիր սուլթանը: Յարակցաբար օսմանեան պատմութիւն եւ հաստատութիւններ, Պէյրութ, 1980, էջ 822:
67 Տե՛ս Դմիտրի Երեմեն, Թուրքերի..., էջ 235:

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական համոզն

թյունը⁶⁸: Ուստի, տնտեսական զարգացման մարտահրավերներին արձագանքում էր հայկական և հունական կապիտալը, հետո միայն՝ թուրքական և մահմեդական մյուս ազգությունների առևտրատնտեսական վերնախավը: Յովհաննես Լեփսիուսը գրում էր. «Հայերը, հույները, հրեաներն իրենց մեջ էին բաժանել երկրի ներմուծման և արտահանման ամբողջ գործը: Մինչդեռ թուրքերը վեր չէին բարձրացել պարզունակ ու փոքր խանութպանությունից»⁶⁹: Օսմանյան տնտեսության մեջ, հայկականի և հունականի համեմատությամբ, թուրք ունեւոր դասը ածանցյալ վիճակում էր: Այն շատ ետ էր մնում իր մրցակիցներից և ուժերի իրական հարաբերության մեջ նշանակալի տարր չէր կազմում:

1908 թվականին՝ Սահմանադրության հռչակումից շատ չանցած, երիտթուրքական իշխանություններին պարզ դարձավ, որ այդ փաստաթղթի թերի և անկատար կիրարկումից անգամ՝ օգտվողները ոչ թուրք տարրերն են, ովքեր գրեթե ամբողջապես տիրացել էին երկրի տնտեսությանը՝ հողագործությունն ու պաշտոնեությունը թողնելով թուրքերին⁷⁰: Ջգալիորեն բարձրացել էր հայերի քաղաքական կշիռը և՛ գավառներում, և՛ հատկապես կայսրութեան մայրաքաղաքում: Օսմանյան պետության մի քանի նախարարներ, նույնիսկ արտաքին գործոց նախարարը, հայեր էին: Բրիտանոնյաներին զինվորագրելու հետևանքով հայ տարրը սկսեց դիրքեր գրավել նաև թուրքական բանակում⁷¹: Հայերը սկսել էին անմիջական մասնակցություն ունենալ նաև երկրի հասարակական կյանքին: Լեզուների, եվրոպական մշակույթի, իրավաբանության, հռետորական արվեստի իմացությամբ օսմանյան խորհրդարանի հայ երեսփոխանները հենց սկզբից առաջացնում էին թուրքերի նախանձն ու վախը: Բոլոր այլազգիների նախանձն էր գրգռում նաև հայոց ազգային կրթական համակարգը:

Հայերի նկատմամբ թուրքերի վախը և ատելությունը շեշտվեց հատկապես 1912 թվականին՝ Հայկական բարենորոգումների հարցի բարձրացումից հետո: Օսմանյան իշխանությունները կտրականապես դեմ էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումների անցկացմանը: Բարենորոգումների համար հայերի պայքարը, երիտթուրքական կուսակցության պարագլուխներից մեկի՝ դոկտոր Նազըմի կարծիքով, դառնալու էր հայոց անկախության սկզբնավորումը: Իսկ արևելյան մահանգների վրա հայկական պետության կազմավորումը նա համարում էր թուրանական ծրագրի տապանաքարը: Դրա վկայությունը, ըստ Նազըմի, այն էր, որ 1908թ. Սահմանադրության հռչակումից հետո հայերը բռնել էին ազգային, մշակութային և տնտեսական անօրինակ վերելքի ճանապարհը: Հայոց պետության կազմավորմամբ թուրքերը ոչ միայն հրաժարվելու էին թուրքական ցեղերի միավորման գաղափարից, այլև նրանց պետությունը սահմանափակվելու էր Կոնիայի սելջուկ սուլթանների նեղ հողատարածքների վրա: Դրա մեջ Նազըմը տեսնում էր թրքության մահացման սկիզբը: Նա գտնում էր նաև, որ հայերի վերացումով Հայկական հարցին վերջ դնելուց գատ, թուրքերը կազատվեն նրանց տնտեսական մրցակցությունից, և

68 Տե՛ս Գովհաննես Ինճիկյան, Օսմանյան ..., էջ 282:

69 Յոհաննես Լեփսիուս, Գաղտնի..., էջ 166:

70 Տե՛ս Լեւոն Չորմիսեան, Ապրիլեան եղեռնի պատճառներու եւ պատասխանատուներու մասին, Գերսամ Սիարոնեան, Յուշամատեան Սեժ եղեռնի 1915-1965, Պէյրուք, 1965, էջ 162:

71 Տե՛ս Գրաչիկ Սիմոնյան, Թուրք ..., էջ 288:

լայն գործունեության ասպարեզ կատանան, իսկ հայերի հարստությանը տեր կդառնան օսմանյան պետությունն ու թուրքերը⁷²:

Երիտթուրքերի մեկ այլ պարագուխ՝ Ջավիդ բեյը, հայտարարում էր. «Տնտեսական իշխանությունը հայու ձեռքն է, հայերէն ոչ ոքի մնալու պայմանաբնաջնջումը մեր ազգային քաղաքականութեան տեսակետին որչափ որ ստիպողական պէտք մըն է, նոյնչափ ալ թուրքին տնտեսական իշխանությունը հիմնելու համար կարեւոր է»⁷³:

Երիտթուրքական կառավարությունը խիստ մտահոգված էր, որ հայերի տնտեսական հզորացումը անպայման իր անդրադարձն է ունենալու գալիք օրերի վրա և հիմք է դառնալու նրանց վաղվա քաղաքական հաղթանակների համար: Աստիճանաբար թուրք իշխանությունների մոտ ուժեղանում էր այն մտայնությունը, որ վաղ թե ուշ երեկվա հպատակ հայը տիրանալու է քաղաքական իշխանությանը, ինչպես դա արել է տնտեսության ասպարեզում⁷⁴:

Գրիգոր Չոհրապը 1913 թվականին արդեն կանխատեսում էր երիտթուրքական իշխանությունների հետագա քայլերը. «Բայց ո՛չ Կառավարութեան օժանդակությունը, ո՛չ դատարաններուն աչառկոտությունը կրնային ապահովել իսլամներուն կեանքի մակարդակ մը որուն յաջողած էին քրիստոնեաները անդուլ աշխատանքով: Պէտք էր դիմել ուրեմն զանգվածային ջարդերուն՝ դանդաղացնելու համար քրիստոնեայ տարրին գործունեությունը, նոյնիսկ ստիպել լքելու երկիրը, որպէսզի անոնց ինչքը մնայ Թուրքին: Թրքական Հայաստանի մէջ ստեղծուած հողային հարցը ատկէ կ'առաջանայ: Թուրքիոյ մէջ կատարվող ջարդերը, որպէս պատահական աղետներ չեն ներկայանար ուրեմն, այլ որպէս տնտեսական երեւոյթներ...»⁷⁵:

Թուրքերը երկրում չունեին այլ առավելություն, քան իրենց ձեռքում կենտրոնացած զորքը և պետական կառավարման մյուս լծակները⁷⁶: Դրանց վրա հենվելով, նրանք ձեռնամուխ եղան հայութունը, Հայաստանը և Հայկական հարցը հրապարակից վերացնելու գործին: Ուստի, հայերի տեղահանությունից և ցեղասպանությունից հետո երկիրի տնտեսությունը հայտնվեց աղետալի վիճակում: Այդ մասին էին վկայում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կայսրությունում գործող օտար դիվանագետները, զինվորականները, միսիոներական կազմակերպությունների ներկայացուցիչները: Յոհաննես Լեփսիուսն իր պատրաստած տեղեկագրում հաղորդում էր. «Քանի որ ներքին առևտրի 90 տոկոսը հայերի ձեռքին է, սպա տարագրության հետևանքը կլինի երկրի կործանման գնալը: Որովհետև գործարքների մեծագույն մասը վարկով է կատարվում, հարյուրավոր ծանոթ առևտրականներ, ովքեր հայ չեն, գտնվում են սնանկացման եզրին: Դատարկված երկրամասերում, բացառությամբ մի քանի տեղերի, այլևս չկան ոչ **որմնադիր**, ոչ **երկրագործ**, ոչ **հյուան**, ոչ **ատաղձագործ**, ոչ **բրուտ**, ոչ **կղմինդրագործ**, ոչ **տարագագործ**, ոչ **կոշկակար**, ոչ **ոսկերիչ**, ոչ **դեղագործ**, ոչ **բժիշկ**, ոչ **փաստաբան**, ոչ

ԻԿ(Ը) տարի, թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

72 Տե՛ս Մեվլան Ջադէ Ռիֆատ, Օսմանեան յեղափոխութեան մութ ծալքերը..., Պէյրուք, 1938, էջ 160, 165-166, 186-187, 191-196, 347:
73 Մեվլան Ջադէ Ռիֆատ, Օսմանեան..., էջ 166:
74 Տե՛ս Լեւոն Վարդան, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրուք, 1970, էջ 56:
75 Գրիգոր Չոհրապ, Հայկական հարցը փաստաթուղթերու լուսին տակ, Երկերի ժողովածու, հտ. գ., Եր. 2002, էջ 532-533:
76 Տե՛ս Ջոն Կիրակոսյան, Առաջին ..., էջ 95:

էլ մի անձ, որ պատկանի ազատ ասպարեզներին և զբաղվի ինչ-որ արհեստով: Երկիրը իրապես հուսահատական կացության պիտի մատնվի»⁷⁷ (ընդգծումները մերն են-Ա. Ա):

Ավստրո-Հունգարիայի զինվորական կցորդի 1915թ. մայիսի 19-ի զեկու-ցագրում ասվում է, որ հայ ազգաբնակչության մեծ մասի արքայազնու պատ-ճառով ասիական Թուրքիայի մի ամբողջ տարածք զրկվել է իր արդյունաբերող բնակչությունից և տնտեսական կյանքը այնտեղ կաթվածահար է եղել⁷⁸:

Հարունիեի (Ադանայի նահանգ - Ա. Ա.) գերմանական որբանոցի վարիչ Բ. Ֆոն Դոբելերի 1915 թվականի հուլիսի 15-ով թվագրված վկայության մեջ ասվում է. «Յուրաքանչյուր ոք կարող է վկայել, որ այստեղ հանցագործություն է կատարվում ժողովրդական տնտեսության դեմ: Պետությունը լավագույն ուղու վրա է՝ հենց իրեն ծանր ու տևական հարված հասցնելու համար: Ի՞նչ հսկայական արժեքներ են ներդրված տարբեր առևտրական հիմնարկներում ու ձեռնարկություններում և որքան անփոխարինելի ծառայողներ կան: Ինչպես գործարանները, այնպես էլ Բաղդադի երկաթուղին, մեծ ու փոքր բանկային հիմնարկները ստիպված եղան փակվել՝ հայերի տեղահանման կառավարության միջոցառումներից հետո: Թուրքական կառավարությունը ի վիճակի չէ այդ աշխատողների համար փոխարինողներ գտնել, և այն ուժերը, որոնց նա անփութորեն շարտում է իրենից, պոկում է իր իսկ պետական մարմնից»⁷⁹:

Գերմանիայի բողոքական շրջանակների անվանի ներկայացուցիչների՝ Գերմանիայի ռեյխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղված 1915 թվականի հոկտեմբերի 15-ի դիմումում ասվում էր. «Կասկածից դուրս է, որ Արևելքի ամենաաշխատունակ ու ջանասեր ժողովրդին հասած հարվածը տնտեսական, մշակութային ու քաղաքական առումով Թուրքիայի ապագայի համար կունենա ամենաճակատագրական հետևանքներ, իսկ արդեն հաշտության բանակցությունների ժամանակ ամենազգայուն ձևով կդիպչի Թուրքիայի հետ դաշնակից տերությունների շահերին և պատվին: Առևտուրն ու արհեստը, որ երկրի խորքում բացառապես հայերի ձեռքում էին, ոչնչացված են: Կոստանդնուպոլսի հայ առևտրական և արհեստավոր բնակչության (մոտ 180.000), Ջոյուռնիայի՝ (28.000), Ադանայի և մի քանի այլ հայկական շրջանների ծայրամասերում ընկած քաղաքների, որոնց մինչև հիմա ձեռք չեն տվել, նախապատրաստվող տեղահանումը խիստ ճակատագրական կլինի Գերմանիային՝ խիստ շահագրգռված Թուրքիայի տնտեսության զարգացման համար: Երկրի զիտնականների կարծիքով, չի կարելի հույս ունենալ, թե տասնամյակներ հետո թուրք և հրեա տարրերն ի վիճակի կլինեն հանդես գալ հայկական տարրի կորստյան փոխարեն»⁸⁰:

1915 թվականի դեկտեմբեր 2-ի Ավստրո-Հունգարական դիվանագիտական փաստաթղթում հայտնվում էր. «Հայերի հալածանքները ունեն նաև տնտեսական շատ լուրջ կարևորություն: Հայերի վերացումով Թուրքիան ընթանում է տնտեսական մեծ աղետին ընդառաջ»⁸¹:

77 Յոհաննես Լեփսիուս, Գաղտնի ..., էջ 171:

78 Տես Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (Փաստաթղթերի ժողովածու) (1915-1918) եր., 2004, էջ 30:

79 Վոլֆգանգ Գուստ, Հայերի..., էջ 100:

80 Նույնը, էջ 275:

81 Ավստրո-Հունգարիայի ..., էջ 78:

Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջես Բ. Ջեկսոնը դեսպան Հենրի Մորգենթաուին 1915 թվականի օգոստոսի 3-ի իր զեկուցագրում հայտնում էր. «Քանի որ ներքին շրջաններում առևտրի 90 տոկոսը հայերի ձեռքում էր, երկիրը հայտնվեց ավերման եզրին: Գործարքների մեծ մասը արվում էր ապառիկ և հարյուրավոր գործատերեր, որոնք հայ չեն, հայտնվեցին սնանկացման եզրին: Էվակուացրած շրջաններում չի մնա ոչ մի կաշեգործ, ձուլորդ, դարբին, դերձակ, կարպետագործ, բրուտ, բժիշկ, իրավաբան կամ որևէ այլ մասնագետ կամ արհեստավոր, բացի մի քանի բացառություններից, երկիրը կհայտնվի անօգնական վիճակում»⁸²:

Բաղդադի երկաթուղու գլխավոր տնօրեն Ֆրանց Յ. Գյունտերի՝ Կոստանդնուպոլսում Գերմանիայի դեսպանության խորհրդական Նոյաթին ուղղված 1915 թվականի օգոստոսի 10-ի զեկուցագիրը տեղեկացնում է. «Երբ ես մեկ ամսվա բացակայությունից հետո կրկին վերադարձա Կալքերի (Կեսարիա - Ա. Ա.), հենց այդ պահին, երբ տանում էին հայ արական սեռի բնակչությանը և տարօրինակ է, կրկին դեպի Արևելք՝ հայ ժողովրդի մեծ գերեզմանոցը: Կայզերին առևտրի համար չափազանց կարևոր վայր է, այն ամբողջովին հայերի ձեռքում է: Ես փակված տեսա բոլոր հայկական խանութները, շուկան՝ ամառացած, արտադրությունը, մանածագործարանները, գորգագործական ֆաբրիկաները՝ մեռած: Այդ ամենը կարող են ունենալ դառնագույն հետևանքներ»⁸³:

Սվազ (Մեքսատիա) քաղաքի հայության մասին Ֆրանց Յ.Գյունտերը իր զեկուցագրում հաղորդում էր հետևյալը. «Քաղաքն ունի 60-80.000 բնակիչ, որից 30.000-ը՝ հայ, որոնց ձեռքում էր այդ քաղաքի հիմնական առևտուրը: Այն ոչնչացված է երկար ժամանակով»: Այնուհետև նա շարունակում էր. «Սպանել կանանց ու երեխաների, բնաջնջել մի ժողովուրդ, որքան էլ նա անտանելի լինի, այնուամենայնիվ, նա անհրաժեշտ է առևտրի մեջ անտաղանդ թուրքերի համար, դա՝ անկախ անմարդկայնությունից, նաև մեծագույն հիմարություն է, քանի որ այն հանգեցնում է երկրի սնանկացմանն ու երկիրը դարձնում է ոչ կենսունակ»⁸⁴:

Ալեքսանդրետի փոխհյուպատոս Հոֆմանի՝ ռեյխսկանցլեր Բեթման Հոլվեգին ուղղված 1915 թվականի սեպտեմբեր 6-ի զեկուցագրում ասվում է. «Ալեքսանդրետի հայ բնակչությունը կազմում էր ընդհանուրի միայն 1/6 մինչև 1/5 մասը (10.000-12.000): Բայց այդ ոչ մեծ մասն առանձնանում էր իր գործարարությամբ, վարպետությամբ, նպատակասլացությամբ: Հայերի տեղահանման հետևանքով Ալեքսանդրետում բացակայում են ամենահմուտ արհեստավորները: Քաղաքը մնացել է առանց ատամնաբույժի, առանց ժամագործի: Քաղաքը լքել են ամենագիտակ բժիշկները, հմուտ վաճառականների անձնակազմը, կարևոր առևտրականները»⁸⁵:

Խարբերդում ԱՄՆ-ի հյուպատոս Լեյլի Դեվիսը դեսպան Հենրի Մորգենթաուին ուղղված 1915 թվականի հունիսի 30-ի զեկուցագրում գրում է, որ հայերի բնաջնջման երիտթուրքական կառավարության հղացած և իրականացվող ծրագիրը մարդկային պատմության մեջ ամենամեծ ողբերգություններից մեկն

82 Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտոնական վավերագրերը Զայոց ցեղասպանության մասին, Եր., 2004, էջ 44:
 83 Վոլֆգանգ Գուստ , Զայերի ..., էջ 466:
 84 Նույնը, էջ 465:
 85 Նույնը, էջ 224-225:

է: Նկարագրելով Խարբերոյի նահանգում տիրող իրավիճակը, նա եզրակացնում է. «Առևտրի և արդյունաբերության տեսակետից հայերի արքայի հետևանքը այն կլինի, որ նահանգը հետ՝ միջմադար կվերադառնա: Պաշտոնական վիճակագրությամբ վաճառականության և առևտրական գործարքների 90 տոկոսն իրականացվում է այն դրամատների միջոցով, որոնք պատկանում են հայերին: Բոլոր գործարքները կխափանվեն ու վերականգնելու ոչ մի հնարավորություն չի լինի: Բազմաթիվ բնագավառներում ոչ մասնագետ, ոչ էլ, նույնիսկ, բանվոր կգտնվի: Եթե որոշ արհեստավորների նկատմամբ բացառություն չարվի, դժվար է նույնիսկ պատկերացնել, թե ինչպես պիտի ապրեն այն թուրքերը, որոնք այս կամ այն չափով վարժվել են քաղաքակրթությանը: Մինչև այժմ, սակայն, այդ մասին ոչ ոք չի մտածում: Այլևս ոչ դրամատուն կմնա, ոչ եկեղեցի, ոչ էլ քրիստոնեական դպրոց: Մի հարվածով երկիրը երկու-երեք հարյուր տարով հետ կգնա: Նույնը վերաբերում է Դիարբեքիին և տարածաշրջանի մյուս բնակավայրերին»⁸⁶:

Կոստանդնուպոլսում արտակարգ միսիայի դեսպան Էլուուլմանը ռեյխսկացներ Բեթման Հովվեզին 1917 թվականի փետրվար 18-ի գեկուցագրում գրում էր. «Ես կարծում եմ, որ բնաջնջման քաղաքականությունն ընդհանուր արդյունքում վնասել է թուրքական կայսրությանը: Հայերի քարավանների զարհուրանքները դեռ երկար կծանրանան թուրք անվան վրա և դեռ տևականորեն թունավոր զենք կմատակարարեն նրանց, ովքեր կհերքեն Թուրքիայի քաղաքակիրթ պետություն լինելու հատկանիշը և կպահանջեն թուրքերի արտաքսումը Եվրոպայից: Երկիրն ակնհայտորեն թուլացել է նաև ներքնապես՝ ֆիզիկապես ուժեղ, աշխատունակ, խնայող բնակչության կործանման և տարագրման հետևանքով, քանի որ հատկապես մարդկային ռեսուրսների աղքատությունը մեծագույն արգելքներից մեկն է Թուրքիայի բնական հարստությունների առավել արագ զարգացման գործում»⁸⁷:

Ահա Հալեպում ԱՄՆ-ի հյուպատոս Ջես Ջեկսոնի՝ իր երկրի պետքարտուղարին «Հայկական արհավիրքներ» վերնագիրը կրող 1918 թվականի մարտի 4-ի գեկուցագրից մի հատված. «Որպես պայծառ օրինակ այն բանի, որ թուրքը չի կարող ինքն իրեն պահել, այն էր, որ հայերին Ուրֆայում ոչնչացնելուց մի քանի ամիս հետո արեցին քաղաքի մահմեդական բնակիչները: 1916 թվականի դեկտեմբերն էր, որ Ուրֆայի բնակիչները տեսնելով, որ չունեն դեղագործ, ջրաղացպան, հացթուխ, կաշեգործ, կոշկակար, ներկարար, մանածագործ, դերձակ և այլ արհեստավորներ և առևտրականներ, իշխանություններին ներկայացրին խնդրագիր, որպեսզի թույլատրվեր Ռաքքայում՝ Ուրֆայից երեք օրվա ճանապարհի վրա գտնվող քաղաքում, տեղավորված հայ առևտրականներին և արհեստավորներին տեղափոխեն Ուրֆա: Խնդրագիրն ուղարկվեց Ջեմալ փաշային, որը 2500 այսպիսի մարդկանց իրենց ընտանիքներով հրամայեց գնալ Ուրֆա, և միչև 1917 թվականի մայիսը ավելի քան 6000 տեղահանված հայեր շրջակա գյուղերից ու քաղաքներից հավաքվեցին այստեղ: Երբ ես Հալեպից հեռացա այդ ամսին, հայերն ապրում էին Ուրֆայում և շարունակում էին իրենց գործունեությունը այն կատաղած մարդկանց հետ համերաշխ, որոնք ընդամենը մեկ տարի առաջ ոչնչացրել էին 14.000

86 Ամերիկայի Միացյալ..., էջ 284 և 290:

87 Վոլֆգանգ Գուստ Չայերի..., էջ 418-419

քրիստոնյա հայերի, որոնց նրանք անձամբ ճանաչել էին ու գործ ունեցել նրանց հետ տարիներ շարունակ»⁸⁸:

«Երբ ընդհանուր տեղահանութիւնը կատարուեցաւ, լրացաւ եւ բոլոր Հայերը քշուեցան դէպի անապատները, - գրում է Հալեպի «Գաղթականաց տեսչության» նախկին գլխավոր քարտուղար Նայիմ բեյը,- Թուրքերը՝ գրեթէ ամէն գաւառի մէջ՝ դէմ առ դէմ գտնուեցան իրողութեան մը հետ որուն վրայ չէին խորհած նախապէս: Հայոց մեկնումին պատճառաւ կեանքը անկարելի դարձած էր: Մէջտեղը ո՛չ դերձակ կար, ո՛չ կոշկակար, ո՛չ երկաթագործ, ո՛չ հացագործ, ո՛չ ատաղձագործ, ո՛չ որմնադիր, եւ այլն: Բոլոր արհեստները Հայոց ձեռքը ըլլալով, իրենց մեկնումէն վերջ թուրք ժողովուրդը չէր կրնար նոյն իսկ կեանքի տարրական պահանջները գոհացնել: Ատոր վրայ, շատ տեղեր, կառավարութիւնը սկսաւ ետ բերել մաս մը արհեստաւորներ, ի հարկին բանակներէն առնելով զանոնք: Ձեռնալ փաշա որ միջոց մը Սուրիոյ մէջ իբր վեհապետ իշխեց, Հայոց արհեստներով Սուրիական քաղաքները ծաղկեցնելու համար արտօսած էր որ գաղթականներէն արհեստաւոր եղողները Դամասկոս դրկեն: Այդ կերպ շատ մարդիկ ազատեցան»⁸⁹:

Պատմական անհերքելի ճշմարտություն է, որ հայկական կոտորածների կազմակերպման և իրականացման մեջ պետական քաղաքականության, կրոնական ատելության կողքին, ամենամեծ ազդակներից մեկը հայերի հարստությանը տիրանալու թուրքերի ցանկությունն էր⁹⁰: Կայսրությունը կքած էր արտաքին ահռելի պարտքերի տակ, որոնք երկիրը հասցրել էին կործանման եզրին⁹¹: Պետք էր տիրանալ հայերի հարստությանը և դրա հաշվին վճարել պարտքերը և հոգալ պատերազմական մեծագույն ծախսերը:

1910 թվականին Սալոնիկում տեղի ունեցած երիտթուրքերի համագումարի, ինչպես նաև հաջորդ՝ 1911թ. հոկտեմբերին կայացած կուսակցության կենտրոնի հատուկ նիստի որոշումներով կայսրության կառավարական շրջանները օրենքներ և միջոցառումներ էին մշակում հայ ժողովրդի պլանավորված բնաջնջման և նրանց գույքերի բռնագրավման վերաբերյալ⁹²: Բազմաթիվ են երիտթուրքական կառավարության հրամանները, հրահանգները, շրջաբերականները՝ հայերի կողմից լքված գույքերի հաշվառման, յուրացման և բաժանման մասին⁹³: Դրանցից բացի, գոյություն ունեին «Լքյալ գույքերի» կանոնադրություններ, որոնք նպատակ ունեին կանոնավորել հայերի անշարժ և շարժական գույքի յուրացումն ու թալանը⁹⁴:

Հայերի գույքերի բռնագրավումները, կողոպուտն ու թալանը՝ տեղական իշխանությունների ցուցումով, սկիզբ առան զինակոչի հայտարարման հետ միաժամանակ⁹⁵: 1915 թվականի փետրվարի 18-ին Կարին եկավ երիտթուրքերի պարագլուխներից մեկը՝ Բեհաեդդին Շաքիրը, և նույն օրը բացվեցին Կարնո նահանգի բանտերի դռները, որոնցից դուրս եկած հանցագործներից և դատապարտյալներից կազմվեցին ավագակախմբեր: Շաքիրի հրամանով

ԻԸԸ տարի, թիվ 1(29), Խունվար-մարտ 2010

ԿԵՄ համահայկական համոզես

88 Նույնը, էջ 148:
89 Անտոնյան Արամ, Մեծ ոճիրը, Եր., 1990, էջ 167-168:
90 Տե՛ս Վահագն Տատրեան, Ավարկներ ..., էջ 11:
91 Տե՛ս Դովհաննես Ինճիկյան, Օսմանյան..., էջ 294:
92 Տե՛ս Նույնը, էջ 300:
93 Տե՛ս Լեւոն Վարդան, Դայկական..., էջ 153-158 և 227-232:
94 Տե՛ս Արիս Տ. Կ. Գալֆաեան, Զօմախլու, Նիւ-Եորք, 1930, էջ 110-143:
95 Տե՛ս Դովհաննես Ինճիկյան, Օսմանյան..., էջ 296-297:

նրանց զինեցին ու զգեստավորեցին կանոնավոր բանակի զինվորների հագուստներով և ուղարկեցին հայկական գյուղերի վրա: Բռնությունները և բռնագրավումները հասան աննկարագրելի չափերի: Գրավվեց այն ամենը, ինչը որ բանակին պիտանի էր և անհրաժեշտ: «Պարպուեցան ցորենի եւ հացահատիկի, ուտեստեղենի եւ ալիւրի ամբարները: Պարպուեցան տուն ու խանութ, գոմ ու ախոռ, կալ ու դաշտ: Պարպուեցան տուն, պարտեզ ու անտառ, եկեղեցի եւ մատուռ, գերեզման ու դամբան, իւրաքանչիւր զինուորի համար գրաւուեցաւ 30-120քկ. հաց եւ ուտելիք, եւ Կարինի կեդրոնական մեծ մզկիթը յորդեցավ գրաւուած ապրանքով, ուտելիքով, վերմակ եւ անկողիններով, զգեստներով, նո՛յնիսկ, նո՛յնիսկ գոհարեղէններով, որոնք զիշերով, երբ պաշարման վիճակի դրոթյամբ ո՛չ մէկ հայ չէր կրնար դուրս գալ իր տունէն, բաժնուեցան թուրքերուն»⁹⁶:

Հայերի ունեցվածքի ծրագրավորված թալանի մասին է վկայում գերմանական մամուլի առջև Յոհաննես Լեփսիուսի ելույթի և Գերմանիայի արտգործնախարարության առարկության վերաբերյալ Բեռլինի «Մագդեբուրգեր ցայտունգ» թերթի խմբագրության 1915 թվականի հոկտեմբերի 12-ի հաշվետվությունը: «Ամերիկայի դեսպանը Թալեաթին առաջարկել է՝ բացի նազով Ամերիկա գնացած 7000 հայերից, մնացած բոլոր հայերին էլ տանել Ամերիկա, նույնիսկ մի ամբողջ միլիոն, քանի որ այդ աշխատասեր ու գործարար բնակչությանը կարելի է օգտագործել այն կողմում: Թալեաթը խոսել է Էնվերի հետ, բայց նա հայտարարել է. «Այդ դեպքում կտեղափոխվեն հարուստները, իսկ այստեղ կմնան աղքատները»: Չեկուցողի (Յոհաննես Լեփսիուս-Ա. Ա.) կարծիքով, «... խոսքը ունևոր հայերի ծրագրավորված թալանի մասին է, որոնք ամենուրեք՝ հրեաների և հույների հետ իրենց ձեռքում են պահում առևտուրն ու արհեստը: Այդ իսկ պատճառով տեղահանման հետևանքը նախևառաջ կլինի Անատոլիայի տնտեսական աղետը, իսկ այդ կերպ ինքն (Օսմանյան կայսրութիւնը- Ա. Ա.) իրեն տնտեսապէս կկործանի»⁹⁷:

Հարունիեի գերմանական որբանոցի վարիչ Բ. ֆոն Դոբելերն «Արևելքում հանուն քրիստոնեական բարեսիրության» գերմանական օգնության միության տնօրեն Ֆրիդրիխ Շոխարդին ուղղված 1915 թվականի հուլիսի 15-ի նամակում Ադանայի նահանգում տեղի ունեցած հայկական կոտորածները նկարագրելով, ավելացնում է. «Բնավ չի կարելի անտեսել, թե ինչպիսի արժեքներ են ոչնչացվում քաղաքներում, շատ գործարաններ կղաղարեն գործելուց, քանի որ գրկվելու են աշխատուժից, որն այլ կերպ չի կարող փոխարինվել: Ինչ արժեքներ են գտնվում հայերի ղեկավարած առևտրական ֆիրմաներում: Ապրանքը վաճառելու կամ աճուրդի մասին մտածելու հնարավորություն չի լինի, ամեն ինչ պետք է մնա, որպեսզի ընկնի նրանց ձեռքը, ովքեր դրա վրա չեն աշխատել: Թուրքերն այս անգամ ավելի շատ կհարստանան, քան նախկին ժամանակներում որևէ ջարդի ժամանակ և այդ ունեցվածքի համար պայքարելու կարիք չեն ունենա, այն երկնքից կընկնի նրանց գիրկը»⁹⁸:

Հալեպի «Գաղթականաց տեսչության» նախկին գլխավոր քարտուղար Նայիմ բեյը վկայում էր. «Պատերազմը հազիւ սկսած՝ արդէն անգօր եղող Թուրքիոյ մէջ ծայր տուին անօթոթյունն ու թշուառութիւնը: Այդ թշուառները

96 Լեւոն Վարդան, Կարինի եւ շրջակայքի տեղահանութիւնն ու ջարդերը, Գերսամ Ահարոնեան, «Յուշամատեն Սեժ եղեռնի 1915-1965», Պէյրութ, 1965, էջ 446-447:

97 Վոլֆգանգ Գուստ, Յայերի..., էջ 255:

98 Նույնը. էջ 159-160:

խաբել, կշտացնել պէտք էր, եւ ասիկա ալ՝ հայերուն թողնուելիք դրամը կարող էր իրականացնել: Էրզրումի, Պիթլիսի, Տիարքեքիի, Մամուրէթ իւլ Ազիզի, Սվազի նահանգներուն մէջ՝ հայոց ջարդն ու ինչքերուն կողոպուտը սկսաւ: Այս զբաղումը ժողովուրդին ամէն բան մոռացնել կու տար: Սուրիան եւ Միջագետքի դաշտը, ճամբաները, Սուրիոյ անապատները հայերով լեցուեցան: Գարերու ընթացքին պատուաբեր ջանքերով շահած հայոց ահագին հարստութիւնը իր ամբողջ շքեղութեամբ և մեծութեամբ կորսուած էր: Ինչ որ կը մնար՝ պիտի կորեր այդ անապատներուն մէջ, որոնց ժողովուրդը շուտով հասկցաւ թէ այդ գաղթականի կարաւանները իբրեւ գոհ կը դրկեն իրենց»⁹⁹:

«Մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը» վերնագրով "Basler Nachrichten" («Բազլեր Նախրիխտեն») թերթի 1915 թվականի սեպտեմբերի 16-ի թրթակցությունում հայտնվում էր, որ անմարդկային բռնություններ են կատարվում տեղահանված հայերի նկատմամբ: Տեղի է ունենում նրանց շարժական և անշարժ գույքի բռնագրավում և բնակչության լիակատար կողոպուտ: Ասիական Թուրքիայի ամենանախաձեռնող և ամենակուլտուրական ժողովուրդը, որն իր ձեռքում է պահում երկրի բոլոր արհեստներն ու առևտուրը, այսօր վերածվել է մուրացկան ժողովրդի¹⁰⁰:

Ահա անհատական սեփականության կողոպուտի մասին պատմող պաշտոնական տեղեկագրի մեկ մնուշ, որը կազմվել է Սեբաստիայի, Էրզրումի, Թոքատի լքյալ գույքերի հանձնաժողովի կողմից: 1918թ. մայիսի 4-ին ստացված հրամանի հանաձայն, հանձնաժողովի անդամները Սեբաստիայից տարագրված էլմաս անունով մի հայուհու պայուսակներում հայտնաբերել և արձանագրել են 271 կտոր ոսկյա դրամ, զարդեղեն և գոհարեղեն: Սա միայն մեկ հայ ընտանիքի զարդեղենն էր: Տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ կողոպտվեցին՝ նախքան անապատներում նահատակվելը¹⁰¹: 500.000 հայ ընտանիքների սեփականությունը, որը շատերի դարավոր քրտինքի արդյունքն ու խնայողությունն էր, կողոպտվեց և յուրացվեց¹⁰²:

Հազարամյակների պատմության ընթացքում ստեղծված նյութական, մշակութային և հոգևոր արժեքների, հարստության չբացումը հնարավոր չէ վերածել թվերի, ձևակերպել բառերով, ամփոփել հաշվեցուցակների մէջ: Սակայն հակառակ այդ ամենի՝ 1919թ. Ազգային Միացյալ պատվիրակության նախաձեռնությամբ, օտարերկրյա մասնագետներից կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Օսմանյան կայսրությունում Մեծ եղեռնի հետևանքով հայերի կրած նյութական վնասի գնահատման համար¹⁰³: Ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի և Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանի ստորագրությունները կրող՝ Փարիզի Խաղաղության համաժողովին մատուցված պահանջների ծրագիրը բավական հեռու էր իրականությունից¹⁰⁴: Ներկայացրած հաշվեկշիռը հազիվ թէ կարողանար հասնել իրական կորուստների մոտավոր սահմանին անգամ, քանզի դրանց մեծությունն ահռելի և անչափելի էր: Կողոպտվել և

99 Արամ Անտոնյան, Մեծ... , էջ 246:

100 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1991, էջ 437-438:

101 Տե՛ս Հայկազն Գ. Ղազարեան, Տեղասպան թուրքը, Պէյրուք, 1968, էջ 238-239:

102 Տե՛ս Նույնը, էջ 226:

103 Տե՛ս Լեւոն Վարդան, Հայկական..., էջ 312:

104 Տե՛ս Tableau Approximatif Des Reparations Et Indemnite's Paus Les Dommages Subis Par La Nation Arme'nienne En Arme'nie De Turquie Et Dans La Re'pubigue Arme'nienne Du Caucase, Փարիզ, 1919

յուրացվել են 2 650.000 հայերի ինչքերն ու կալվածքները, որոնց ընդհանուր գումարը, 1919 թվականի համարժեքով, կազմում է **14.589.460.000** միլիարդ ֆրանկ¹⁰⁵:

Տեղեկագիրը տալիս էր հայերի կրած կորուստների ոչ ամբողջական ցանկը: Պատվիրակության հաշվեցուցակում չեն ներկայացվել Օսմանյան կայսրության տարբեր դրամատներում և ապահովագրական ընկերություններում պահվող հայերի այն գումարները, որոնք յուրացվեցին երիտթուրքական կառավարություն կողմից: Այս տեղեկագրում չի ներկայացված օտար ապահովագրական ընկերություններին հայերի՝ ոսկեդրամով վճարած գումարները¹⁰⁶: Դրանք ամերիկյան, անգլիական, ռուսական, գերմանական, ֆրանսիական, ավստրիական, իտալական ընկերություններ էին: Այդ ապահովագրություններից, 10.000-ից միայն մեկ անձ, իբրև ժառանգորդ, կարողացել է ստանալ իր ապահովագինը: Իսկ մնացած հազարավորների ապահովագրությունները չեն վճարվել, քանզի թե՛ ապահովագրված անձինք և թե՛ նրանց ժառանգները սպանվել էին, իսկ փաստաթղթերը՝ կորել կամ ոչնչացվել: Ոսկեդրամով մասնավճարները նույնպես մնացին այդ օտար ապահովագրական ընկերություններին¹⁰⁷:

Այս տեղեկագրում ամբողջական չէ ազգային սեփականության կորստի հաշվարկը՝ **83** առաջնորդարանների, **1860** հայկական եկեղեցիների և մատուռների, **451** վանքերի, շուրջ **2000** վարժարանների, դպրեվանքերի և որբանոցների ողջ ունեցվածքը՝ իրենց կալվածքներով, կահկարասիով, կրոնական հնություններով, մատուռներով, ձեռագիր մագաղաթներով և մատենագրական հսկա հարստությամբ, որոնք թալանվեցին, ավերվեցին, հրկիզվեցին, ոչնչացվեցին և անէացան¹⁰⁸:

Թերևս դժվար և նույնիսկ անհնար է պատկերացնել Հայկական քաղաքակրթությանը վերաբերող գրեթե անհաշիվ հարստության կորստի մեծությունն ու ահռելիությունը: Անհնարին է հաշվել հայկական վանքերի և եկեղեցիների մեջ դարերով կուտակված ու պահված հայկական մշակութային գանձերի կորստի քանակը, որոշել դրանց գիտական, պատմական և գեղարվեստական արժեքը: Մասնավորապես, հայկական ձեռագրերի ոչնչացումը խոշոր հարված էր ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթին ու գիտությանը և անդառնալի կորուստ մարդկության, համաշխարհային քաղաքակրթության համար¹⁰⁹:

Հայերի ֆիզիկական ոչնչացումով կտրուկ պակասեց երկրի շինարար տարրը, առևտուրը, արհեստագործությունը, երկրագործությունը և արդյունաբերությունը զգալի անկում ապրեցին, սակայն թուրքերի համար դրանք անցողիկ և ժամանակավոր խնդիրներ էին: Փոխարենը՝ նրանք կարողացան հայերին իրենց պապենական հողերից արմատախիլ անելով և ոչնչացնելով՝ վերջնականապես ձեռքազատվել Հայկական հարցից, ամայացնել Արևմտյան Հայաստանը և տիրանալ հայկական հարստությանը¹¹⁰:

105 Տե՛ս Հայկազն Գ. Ղազարյան, Ցեղասպան ..., էջ 239

106 Տե՛ս Զավեն արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, վաերագրեր եւ վկայութիւններ, Գահիրե, 1947, էջ 319

107 Տե՛ս Հայկազն Գ. Ղազանան, Ցեղասպան..., էջ 226

108 Տե՛ս Լևոն Վարդան, Հայկական ..., էջ 312

109 Տե՛ս Տաճատ Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1923, տարիներուն, ք. տպ., Վենետիկ, 2001

110 Տե՛ս Լեւոն Զորմիսեան, Համապատկեր ..., հտ. գ., էջ 146:

Օսմանյան կայսրության պետական բյուջեն, հակառակ պատերազմական ծանր պայմաններին, հետևյալ աննախադեպ աճն արձանագրեց. **1913-14** տարեշրջանում շուրջ **35** միլիոն օսմանյան ոսկի, **1915-16թթ.**՝ **38** միլիոն, իսկ **1917-18թթ.** այն հասավ **85** միլիոնի: Ավելին, **1918** թվականին, կայսրության ողջ պատմության ընթացքում առաջին անգամ երիտթուրքական իշխանությունները թողարկեցին **19** միլիոն օսմանյան ոսկուն համարժեք արժեթղթեր: Դժվար չէ կռահել, որ պետական գանձանակը լցվեց հայերի ինչքերի և կալվածքների թալանի հաշվին¹¹¹:

Եվրոպական երկրների դիվանագետների և հետախուզությունների տեղեկությունների համաձայն՝ կայսրությունն իր անկախությանը սպառնացող արտաքին պարտքերի զգալի մասը մարել է օսմանյան բանկերում պահվող հայերի ավանդների հաշվին¹¹²:

Այսպիսով, դարերի քրտինքով և տքնությամբ հայերի ստեղծած ունեցվածքի յուրացումով թուրքերը կարողացան ետ մղել իրենց սպառնացող վտանգները, ստեղծել սեփական ունևոր դասը և ամբողջապես թրքացնել երկրի տնտեսությունը:

Summary

ARMENIANS IN THE ECONOMY OF THE OTTOMAN EMPIRE

Economic reasons as influential factors in the Armenian Genocide

Anahit Kh. Astoyan

As the ruling ethnic group in the Ottoman Empire, the Turks left the main spheres of the economy to the experienced representatives of the indigenous, civilized peoples of the countries they had conquered. Because of their skill, entrepreneurial mind, and diligence, Armenians, as the oldest bearers of the Western Asia's civilization, gradually began to take up influential positions in the management of agriculture, foreign and internal large-scale trade, crafts, industrial production and finances in the Empire. They controlled the important elements of the Empire's economy. Compared to the Armenians, the Turkish affluent class was peripheral and did not represent as an important element in the Ottoman economy. The Young Turk government, the organizer of the Armenian Genocide, besides their Pan-Turkic political goals, also intended to get rid of the Armenian economic competition.

After the deportation and massacre of Armenians, the Empire's economy collapsed. By annihilating the Armenians living in Western Armenia and Armenian Cilicia, as well as in other parts of the Ottoman Empire, the Young Turk government eliminated its powerful competitor and was able to cover enormous war expenses and pay up its foreign debts simply at the expense of the Armenian wealth and belongings they had confiscated.

111 St'u Sait Cetinoglu, Sermayenin Turklestirilmesi, Resmi Tarih Tartışmaları -2, Ed. Fikret Başkaya, ozgfr niver-site Kitaplığı, 2006- Ankara, sahife. 131:

112 St'u Յուրի Բարսեղով, Հայերի Ցեղասպանության համար նյութական պատասխանատվությունը, Եր., 1999, էջ 10: